

\*\*\*\*\*

Վ. Երանոսյան

ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

-----

## Մեդիակրթությունը որպես ժամանակակից կրթական համակարգի կարևոր ուղղություն

Մեդիակրթությունը ժամանակակից կրթական համակարգի կարևոր ուղղություններից մեկն է: Այն մանկավարժական ուղղություն է, որն ուսումնասիրում է զանգվածային տեղեկատվության օրինաչափությունները և կոչված է ժամանակակից տեղեկատվական դաշտում օգնություն ցուցաբերել և կողմնորոշել երիտասարդ սերնդին:

Մեդիակրթության խնդիրները.

- սովորողների հարմարեցումը (ադապտացիան) մեդիամշակութային կյանքին,
- տեղեկատվության ընկալման ուսուցանում, այն հասկանալու և վերլուծելու կարողություն,
- սովորողի ներաշխարհի վրա մեդիակրթության ազդեցության հետևանքների գիտակցում,
- ժամանակակից տեխնոլոգիաների (մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, վիդեո, կինեմատոգրաֆ, համացանց) և տեխնիկական միջոցների օգնությամբ հաղորդակցվելու կարողությունների տիրապետում:

Այսօր տարբեր աղբյուրներից տարածվող տեղակատվության ահռելի հոսքը խնդիրներ է ստեղծում դրա ընկալման, մշակման և քննադատական մտածողության զարգացման գործընթացներում:

Ներկայումս ձևավորվում է նոր, աշխարհագրական սահմաններ չճանաչող, մշակութատեղեկատվական միջավայր: Մալուխային հեռուստատեսության ու ռադիոտեղեկավարության ալիքների աճը, համակարգչային ցանցերի ու տեխնոլոգիաների զարգացումը, փոխեցին կրթամշակութային տարածությունը, դարձնելով այն անդրազգային:

Կարելի է առանձնացնել մեդիակրթության երկու ուղղություններ. սոցիալմշակութային (իրականացվում է ուսումնական դասընթացներում) և ներառական, որը հանդիսանում է ուսումնական առարկայի մասը:

Սոցիալմշակութային մեդիակրթությունը, որի արմատները գնում են դեպի 20-րդ դարի 20-ական թվականներ, մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի, կինոյի միջոցով ժամանակակից մարդուն հաղորդակից է դարձնում համաշխարհային մշակույթին:

Ե. Ա. Բոնդարենկոյի և Ա. Ա. Ժուրինայի տվյալներով՝ մեդիակրթության առաջին կուրսերը երևան են եկել 20-րդ դարի 60-ական թվականներին, երբ մեդիակրթության և ուսումնական առարկաների ինտեգրման փորձեր էին ձեռնարկվում [1, էջ 89]:

Մեդիամշակութային բնագավառի համընդհանուր առաջատարը համարվում է ԱՄՆ-ը: Ժամանակակից տեղեկատվական դաշտում, ամբողջ աշխարհի երիտասարդ սերնդի մտքի վրա ԱՄՆ-ի ԶԼՄ-ները ահռելի ազդեցություն են գործում: Անգլիախոս երկրներում, «մեդիակրթություն» (media education) հասկացությանը զուգահեռ մեծ տարածում ունի «մեդիագրագիտություն» (media literacy) հասկացությունը:

Գիտական գրականության մեջ ընդունված է առանձնացնել ԱՄՆ-ի մեդիամշակույթի զարգացման հետևյալ պատմական փուլերը.

1. Առաջին փուլը (20-րդ դարի 60-70-ական թվականներ) մեդիակրթության զարգացման սկզբնական փուլն է: Այն գոյատևել է առանձին ուղղությունների տեսքով, որոնք հիմնավորվել ու խմբավորվել են կինոկրթության շուրջ: Այդ շրջանում ծաղկում ապրեց հեռուստատեսությունը, ավելացավ հեռուստաալիքների թիվը, աճեցին գովազդների դերն ու նշանակությունը:

2. Երկրորդ փուլում (20-րդ դարի 80-ական թվականներ) ձևավորվում են մեդիակրթության հիմնական բազային մոդելները, փորձեր են կատարվում մեդիակրթությունը, որպես ընտրողական առարկա, կամ հումանիտար գիտության դասընթացի առանձին բաժին, ներառել դպրոցական ծրագրերում: Համալսարաններում մեդիադասընթացները սովորական երևույթ են դառնում: Առաջանում է մեդիամանկավարժությունը:

3. Երրորդ փուլում (20-րդ դարի 90-ական թվականներ և 21-րդ դարի սկիզբ) ամերիկյան հասարակության մեջ աճում են մեդիակրթության կարգավիճակն ու հեղինակությունը, այն ընդգրկվում է առանձին նահանգների կրթական չափորոշիչներում և մեծացնում ազդեցությունը՝ շնորհիվ ինտերնետի և մուլտիմեդիական համակարգչային ցանցերի [5, էջ 70-74]:

Մեդիակրթությունը իր ուրույն տեղն է ունի նաև Ավստրալիայում, որտեղ ուսուցիչների համար մշակվել են մեդիակրթության հատուկ ծրագրեր, կազմակերպվում են կոնֆերանսներ, հրատարակվում են մասնագիտացված ամսագրեր: Դպրոցական ծրագրերում մեդիակրթության խնդիրների շուրջ ներառվում են հատուկ թեմաներ:

Գերմանիայի դպրոցներում մեդիակրթությունը ուսումնասիրում են ոչ թե որպես առանձին ուսումնական առարկա, այլ որպես հումանիտար հոսքի առարկաների անբաժանելի մաս: Գերմանիայի ֆեդերալ ողջ տարածքում գործում են կենտրոններ, որոնք մեդիակրթության շրջանակներում օգնություն են ցուցաբերում ուսուցիչներին:

Նիդերլանդներում մեդիակրթությունն ասելով հասկանում են ձայնատեսողական կրթությունը: Մի շարք դպրոցներում անցնում են առանձին դասընթացի տեսքով, որոշ դպրոցներում՝ ավանդական ուսումնական առարկաների շրջանակներում՝ որպես առանձին թեմաներ:

Նորվեգիայում մեծ ուշադրություն է դարձվում դպրոցականների մեդիակրթությանը, որն իրականացվում է երեք ձևերով՝ որպես ինքնուրույն ուսումնական առարկա, որպես ֆակուլտետային դասընթաց, որպես հումանիտար առարկայի շրջանակներում ուսումնասիրվող թեմա: 1987 թվականից մեդիակրթությունը պարտադիր է դառնում յուրաքանչյուր դպրոցի համար: Նախապատվությունը տրվում է ավանդական ուսումնական առարկաների մեջ մեդիակրթության ներառմանը:

Դանիայում 1961 թվականից ստեղծվում է կինեմատոգրաֆիայի և հեռուստատեսության ուսումնասիրության առանձին դասընթաց: Այն առաջարկվում

է ավագ դպրոցականներին՝ ֆակուլտատիվների տեսքով: Ներկա ժամանակահատվածում մեդիակրթության խնդիրները դիտարկվում են պատմության, սոցիալական գիտությունների, ինչպես նաև կրտսեր դասարաններում՝ լեզվի դասաժամերին [1, էջ 92-93, 95]:

Բուհերում ուսումնական հեռուստատեսությունը կիրառվում է հիմնականում փակ հեռահամակարգերի օգնությամբ, որոնց միջոցով լսարան է հաղորդվում դասախոսության հեռուստապատկերը:

20-րդ դարի 60-ական թվականներին ստեղծվեցին առաջին հեռուստատեսային հեռակա բարձրագույն կրթության ինքնավար ձևերը:

Նմանատիպ ուսումնական հաստատության լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Բրիտանական բաց համալսարանը (հիմնադրվել է 1969թ.), որտեղ ավարտական քննությունները հաջող հանձնած ուսանողներին տրվում է բարձրագույն կրթության դիպլոմ:

Հեռուստատեսային հեռակա ուսումնական հաստատություններ ստեղծվեցին նաև Հոլանդիայում, Իսրայելում, Կանադայում, Չամբիայում, Ինդոնեզիայում, Չինաստանում և այլ երկրներում:

Ուսումնական հեռուստահաղորդումները մեծ մասսայականություն են վայելում հատկապես բազմալեզու երկրներում.

1. Բելգիայում հաղորդումները իրականացվում են ֆլամանդերեն և ֆրանսերեն լեզուներով,
2. Շվեյցարիայում՝ երեք լեզուներով,
3. մի շարք երկրներում ծրագրերն իրականացվում են առանձին էթնիկ խմբերի համար. Ֆինլանդիայում՝ շվեդերեն լեզվով, Մեծ Բրիտանիայում հաղորդումներ են հեռարձակվում Շոտլանդիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի համար:

Հեռուստատեսությունը սոցիալականացման կարևոր միջոցներից մեկն է, որն անմիջականորեն առնչվում է երեխաների, դեռահասների ու երիտասարդների

արժեքային կողմնորոշման, վարքագծի ձևավորման և կենցաղի կազմակերպման տարբեր ձևերի հետ:

Սակայն, հեռուստատեսությամբ տարվելու երեխաների հակումները կարող են ունենալ նաև բացասական հետևանքներ.

1. կրճատվում է նրանց ակտիվ հանգստի, խաղերի, զբոսանքների, հասակակիցների հետ հաղորդակցվելու ժամանակը,

2. ժամերով հեռուստահաղորդումների չհամակարգված դիտումը կարող է երեխայի առողջությանը մեծ վնաս հասցնել:

Այդ պատճառով անհրաժեշտ է մեծահասակների կողմից հսկողություն սահմանել երեխաների՝ հեռուստահաղորդումների ընտրության հարցում: Աշխարհի շատ երկրներում այդ խնդիրը չափազանց արդիական է:

Այսօր, մեդիակրթությունը ակտիվորեն ներառվում է կրթական պրակտիկայի մեջ: Առանց դրա անհնար է պատկերացնել ժամանակակից կյանքի բոլոր բնագավառների (նաև կրթության) սոցիալալմշակութային զարգացումը:

### **Գրականություն**

1. Бондаренко Е.А. Состояние медиаобразования в мире / Е.А. Бондаренко, А.А. Журин // Педагогика. 2002. N3. С. 88-98.

2. Дистанционное и виртуальное обучение // Дайджест российской и зарубежной прессы. 2001. N1. С. 26, 33, 46.

3. Капранова В.А. Дистанционное обучение за рубежом / В.А. Капранова, И.А. Тавген // Адукацыя I выхаванне. 2001. N7. С. 53-58.

4. Капранова В.А. Дистанционное обучение в США: опыт и перспективы /В.А. Капранова, И.А. Тавген // Народная асвета. 2002. N2. С. 71-75>

5. Новикова А.А. Медиаобразования в США: проблемы и тенденции / А.А. Новикова // Педагогика. 2000. №3. С. 68-74.
6. Педагогический энциклопедический словарь / Под. ред. А.А. Бим-Бада. М.: Бол. Рос. энциклопедия, 2002.
7. Попов Н. Сравнение на управление и финансирование среднего образования в 20 европейских странах / Н. Попов // Управление на среднем образовании. 1996. №8-9.
8. Система образования в США. Статистический центр Министерства образования США.
9. Тихомиров В.П. Виртуальная образовательная среда: предпосылки, принципы, организация / В.П. Тихомиров, В.И. Солдаткин, С.Л. Лобачев. М., 1999. С. 25-26.
10. Федоров А.В. Медиаобразования в Бельгии / А.В. Федоров // Педагогика. 2002. №1. С. 97-99.